



ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Ի՞նչ է վարչական ռեգիստրը

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ▶ Հասարակության ներքին և արտաքին անվտանգության ապահովում
- ▶ Հասարակության յուրաքանչյուր անդամի կայուն զարգացման համար նախադրյալների ձևավորում
- ▶ Հասարակության այն անդամների նվազագույն կարիքների ապահովում, որոնք դեռ և/կամ արդեն ի վիճակի չեն դրանք ինքնուրույնաբար հոգալու

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐ

- ▶ Վարչական լիազորությունների տիրապետող պետական մարմիններ (նախարարություններ, գերատեսչություններ և այլն)
- ▶ Տեղական ինքնակառավարման մարմիններ
- ▶ Հանրային ծառայություններ մատուցող (ոչ վարչական բնույթի) պետական մարմիններ

ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ (ՎԱՐՉԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ) ԳՈՐԾԻՔՆԵՐ

- ▶ Իրավունքների և պարտավորությունների գրանցում ու հաշվառում,
- ▶ Գործունեության արտոնումներ, թույլատրություն, արգելում և կանխարգելում,
- ▶ Խրախուսում ու խաթարում,
- ▶ Կարգավորում,
- ▶ Վերահսկողություն,

ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ (շարունակություն)

- ▶ Ստուգում, ստուգաճշտում, տեսչական զննում և դիտազննում,
- ▶ Վեճերի քննարկում ու լուծում,
- ▶ Պատժի և սահմանափակումների կիրառում,
- ▶ Արտոնություններ, փոխհատուցումներ և անհատույց օժանդակության տրամադրում,
- ▶ Այլ գործիքներ

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- ▶ Հասկացությունների և չափորոշիչների սահմանում
- ▶ Դասակարգումներ (կարգավիճակների, գործունեության տեսակների, արտադրանքի, վարչատարածքային և այլ միավորների)
- ▶ Կոդավորում (միասնական` նույնականացման հնարավորություններով)
- ▶ Անվանական հասցեական տեղեկատվություն (վարչական գործիքների կիրառման արդյունքում ձևավորված)

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Վարչական ռեգիստրները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարվող անվանական` հասցեական տվյալների բազաներ (շտեմարաններ) են, որոնք հիմք են և հետևանք վարչական ներգործությունների համար:

ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- ▶ Վարչական ռեգիստրները ձևավորող մարմիններ (իրենց վերապահված անվանական` հասցեական վարչական ներգործության լիազորության իրացում)
- ▶ Այլ վարչական լիազորությունների տիրապետող մարմիններ (նույնականացնելով այլ վարչական ռեգիստրների անհատական տվյալների հետ)
- ▶ Վիճակագրական մարմիններ (վիճակագրական բնույթի հանրային ծառայություններ մատուցելու համար)
- ▶ Գիտակրթական հաստատություններ և անհատ հետազոտողներ (գիտահետազոտական և կրթական ծառայություններ մատուցելու համար)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

- ▶ Պաշտոնական վիճակագրությունը, որպես վիճակագրական տեղեկատվություն մատակարարող, իրավասու է օգտագործել և ձևափոխել վարչական ռեգիստրներից ստացված տեղեկատվությունը՝ վիճակագրական սահմանումներին և դասակարգիչներին դրանց համապատասխանությունն ու համադրելիությունը ապահովելու նպատակով:
- ▶ Այդ եղանակով ստացված տվյալները չեն փոխանցվում սկզբնական տեղեկատվությունը տնօրինողին (վարչական ռեգիստրին) կամ տրամադրվում երրորդ անձանց վարչական նպատակներով օգտագործելու համար:

Աղբյուրը՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, Համաշխարհային բանկ, ECE-WORLDBANK/2003/W1/2, 11.08.2003

ԿԱՊԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐՆԵՐԻ ՀԵՏ

